

ՀԱԿՈՒ ՄԱՆԱՆԳՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Լրացավ 20-րդ դարի հայագիտության երախտավորներից մեկի՝ ականավոր պատմաբան Հակոբ Համազասպի Մանանդյանի ծննդյան 125-ամյակը: Կեսդարյա գիտական գործունեության ընթացքում Հ. Մանանդյանը գրել է 30 մենագրություն և 100-ից ավելի հոդված, որոնք վերաբերում են հայագիտության ամենատարբեր խնդիրներին: Դրանցից շատերը դարձել են հայ պատմագիտության ոսկե ֆոնդի մնայուն արժեքներից: Մեծ և անուրանալի են Հ. Մանանդյանի ժառանգությունները Երևանի պետական համալսարանի առջև: Նա եղել է Հայաստանի համալսարանի հիմնադիրներից, ընտրվել պատմագրական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար (1920), համալսարանի ռեկտոր (1921), հայ ժողովրդի պատմության ամբիոնի առաջին վարիչ և պատմագրական ու արևելագիտական ֆակուլտետների դեկան (1921-1925), հայ ժողովրդի պատմության ամբիոնի պրոֆեսոր (1921-1931): Հետագայում ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ իսկական անդամ (1939), իսկ 1943 թվականին հաստատվել ՀԽՍՀ ԳԱ իսկական անդամների առաջին կազմում:

Հ. Մանանդյանն իր աշխատությունները գրել է երեք լեզվով՝ գերմաներեն, ռուսերեն և հայերեն: Ավելի ուշ նրա որոշ աշխատություններ բարգձմանվել են ֆրանսերեն և անգլերեն: Առաջին բարգձմանությունը վերաբերում է 1930 թվականին, երբ նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերը ֆրանսերեն բարգձմանեց Հ. Մանանդյանի «Հայաստանի հին ճանապարհները Artaxata-Satala և Artaxata-Tigranocerta քառ Պևտիզեթյան քարտեզի» գեկուցումը¹: Հ. Մանանդյանի ուսումնասիրությունները եվրոպական գիտական հասարակայնությանը ներկայացնելու ուղղությամբ շնորհակալ աշխատանք է կատարել ֆրանսահայ ճանաչված մտավորական, «Հայագիտական ընկերության» անդամ և «Revue des Etudes Arméniennes» հանդեսի աշխատակից Հայկ Պերպեթյանը (1887-1978): Առաջին գործը, որին նա ձեռնամուխ եղավ քարգձմանելու, Հ. Մանանդյանի, ճիշտ է, ոչ այնքան հայտնի, սակայն մեթոդորարևելյան տարածաշրջանային հետաքրքրություն ներկայացնող, «Արարական արշավանքները Հայաստան (Ժամանակագրական դիտողություններ)» ուսումնասիրությունն էր: Թարգմանությունը տպագրվեց համբավավոր «Byzantion» հանդեսում² և ընդունվեց մեծ հետաքրքրությամբ:

Հ. Մանանդյանի մահից հետո նրա ձեռագրերի և ընդհանրապես գիտական ժառանգության ճակատագիրը դառնում է կրտսեր եղբոր՝ տեխնիկական գիտությունների թեկնածու, նշանավոր ինժեներ Արսեն Մանանդյանի (1879-1964) հոգածության առարկան: Այդ օրերին գրած նամակներից մեկում (6 մարտի, 1952) նա հավաստում է. «Հակոբը թողել է 10 հատ անտիպ աշխատանք՝ 4-ը հայերեն և 6-ը ռուսերեն լեզվով: Ես այժմ շատ մտահոգված եմ այդ աշխատանքների տպագրության խնդրով և ուզում եմ իմ կյանքի ընթացքում լուծել այդ խնդիրը, որպեսզի չկորչեն»³: Ի պատիվ Ա. Մանանդյանի, պետք է նշել, որ նա նվիրումով կատարեց այս պատասխանատու և շնորհակալ խնդիրը ու մինչև 1960 թ. հրատարակեց եղբոր ձեռագիր ժառանգության գրեթե բոլոր նշանավոր երկերը:

Այս շրջանում է, որ Պերպեթյանը նախանձախնդիր հեռևողականությամբ բանակցություններ է

¹ Մանրամասն տե՛ս *Լ. Բաբայան, Վ. Հակոբյան*, Հակոբ Մանանդյան, Երևան, 1974, հմտ. Պ. Հ. Հովհաննիսյան, Հակոբ Մանանդյան (կենսամատենագիտություն), Երևան, 1981:

² Տե՛ս «Revue des Etudes Arméniennes», Paris, 1930, tome X, fascicule I, էջ 143-145:

³ Տե՛ս Հ. Մանանդյան, Մանր հիտագոտություններ, Երևան, 1932:

⁴ Տե՛ս *H. Manandian*, Les invasions arabes en Arménie. (Notes chronologiques), «Byzantion», Bruxelles, 1946-1948, tome XIII, էջ 163-195:

⁵ Ա. Մանանդյանի այդ ջանքերի մասին մանրամասն տե՛ս Պ. Հ. Հովհաննիսյան, Նորահայտ փաստաթղթեր համալսարանի առաջին ռեկտորի մասին, տե՛ս «Երևանի համալսարան» (ըստու), 1988, N 2-3, էջ 33-36:

⁶ Տե՛ս Չարիցցի անվան գրականության և արվեստի թանգարան, Հ. Կուսիկյանի ֆոնդ 956, N 3, էջ 1, հմտ. ֆոնդ 957, N 10, էջ 1 և այլն:

վարում «Գալուստ Կոլոկեմնկյան հիմնարկության» հայկական բաժնի պատասխանատուների հետ՝ ֆրանսերեն և անգլերեն թարգմանելու Հ. Մանանդյանի առավել նշանակալից աշխատությունները՝ օտար ընթերցողներին դրանք մատչելի դարձնելու մտահոգությամբ: Համապատասխան համաձայնությամբ ստանալու համար թույլտվություն է խնդրում նաև Արսեն Մանանդյանից: Ստանալով երկու կողմերի բարեհաճ համաձայնությունը՝ Հ. Պերպերյանը թղթակցում է համապատասխան մասնագետների հետ, պայմանավորվում առաջիկա թարգմանությունների վերաբերյալ: Այսպես, 1962 թ. հուլիսի 27-ի է. Պոյաճյանին հղած նամակում նա առաջարկում է «ֆրանսերեն թարգմանել Հ. Մանանդյանի «Չափերը և կշիռները և այլն» փոքր, սակայն արժեքավոր գործը: Արդյոք Դուք տրամադի՞ր եք այս աշխատությունը կատարելու: Եթե այո, հաճեցե՞ք իմացնել և գործի ձեռնարկել»: Հ. Պերպերյանը նման թղթակցություններ է ունեցել նաև հայտնի բանասեր, թարգմանիչ Հ. Թորոսյանի՝ և այլոց հետ: Կատարված աշխատանքի արդյունքներն իրենց երկար սպասեցնել չտվեցին: Մեկը մյուսի հետևից թարգմանաբար լույս տեսան ինչպես նշված «փոքր, արժեքավոր գործը», այնպես էլ «Քաղաքների և առևտրի մասին» և «Տիգրան Բ և Հոռնը» մեծագրությունները: Անշուշտ, այս հրատարակությունները զգալիորեն նպաստեցին եվրոպական միջավայրում Հ. Մանանդյանի գիտական վաստակի արժեքավորման ու ճանաչման գործին՝:

Ստորև ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Հ. Մանանդյանի աշխատությունների թարգմանությունների պատմությանը աղերսվող Հ. Պերպերյանի երկու արժեքավոր նամակը՝ ուղղված Արսեն Մանանդյանին:

Նամակների բնագրերը (2-րդ օրինակ) պահվում են ՀՀ Պարբերական մամուլի պետական կենտրոնական արխիվի Հ. Պերպերյանի ֆոնդում (ֆոնդ 508, ցուց. 1, գործ 84, քր. 64, 137):

Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ո Ւ

Փարիզ, 13 ապրիլի 1963
Մեծահարգ պրն. Արսեն Մանանդյան,

Երևան

Հարգելի հայրենակից,

Հավանաբար տեղեկացած եք, թե Հայկական Ռումանց հանդեսը՝ որ ավելի քան 30 տարի է վեր դադարած էր, պիտի վերահրատարակվի տարեկան մեկ հատորի ձևով (առնվազն 320 էջ)¹: Առաջին հատորը լույս կտեսնի ներկա տարում վերջերք²:

Այս հանդեսին մեջ կամ առանձին հատորով հրատարակվելու նպատակով ֆրանսերենի թարգմանել տված են Չեր հանգուցյալ մեծանուն եղբոր գիտնական Հակոբ Մանանդյանի «Կշիռները և չափերը»՝ ուսումնասիրությունը՝ որը շատ դժվար գործ մըն էր, կը կարտաի վերաքննության և թերևս հարկ ըլլա քանի մը ծանոթագրություններ ավելացնել:

Հրատարակության տեղին և թվականին մասին որոշում մը տալէ առաջ, անհրաժեշտ նկատեցի դիմել Չեզի հասկնալու համար, թե արդյո՞ք հեղինակը իր անձնական օրինակին վրա ուղղումներ կամ հավելումներ ըրած է, թե ոչ: Հաստատական պատասխանի պարագային, շնորհապարտ պիտի ըլլամ, եթե հաճիք անոնց ընդօրինակությունները դրկել: Եթե հարկ ըլլա, պատրաստ եմ իմ օրինակը դրկելու անոր վրա նշանակելու համար ուղղումները և հավելվածները, եթե գոյություն ունին:

Այս թարգմանությունը հրատարակելու պարագային Չեզի կղրկվի 50 օրինակ:

Առ ի տեղեկություն, ավելացնեմ, թե իմ հանձնարարությամբ ֆրանսերենի թարգման-

¹ Տես ՀՀ Պարբերական մամուլի պետական կենտրոնական արխիվ, Հ. Պերպերյանի ֆոնդ 508, ցուցակ 1, գործ 84, ք. 64:

² Չափազանց հետաքրքիր են Հ. Թորոսյանի խորհրդածությունները «Տիգրան Բ և Հոռնը» աշխատության և կատարված թարգմանության վերաբերյալ (տես «Անդաստան», անագիք, Փարիզ, 1965, N 15, էջ 67-70):

³ Մասնավորապես տես Ռ. Դ. Վիլկինսոնի գրախոսականը («Revue des Etudes Arméniennes», 1968, tome V, p. 482-486) և այլն:

վեցավ, սրբագրեցավ, քե՛ր քարգմանությունը և քե՛ր ֆրանսերենը «Տիգրան 2-րդը և Հռոմը»⁶, իսկ Հայաստանի քաղաքներուն և առևտրին վերաբերյալ ռուսերեն հատորը՝ քարգմանվեցավ անգլերենի՛: Առաջին քարգմանությունը տպագրված է, քայք կապապի, որ պրոֆ. Կարկաչինո՝ հառաջաբանը գրելու մասին որոշում մը տա: Ֆրանսիացի այս պատմաբանը մասնագետ է հռոմեական պատմության: Երբ «Տիգրան Բ» լույս տեսնե կգրեմ Չեզի, որպեսզի «Գալուստ Կյուլյենկյան հիմնարկությունեն»¹⁰ ուզեք այնքան օրինակ, որ կփափակիք: Երկու քարգմանություններն ալ լույս պիտի տեսնեն այս հիմնարկության Հայկական մատենաշարին մեջ:

*Սպասելով Ձեր պատասխանին, մնամ հարգանքներով
Հ. Պերպերյան*

N 2

2 հունիս, 1964

Սեծահարզ պրն. Արսեն Մանանդյան,

Երևան

Հարգելի հայրենակից,

Ստացած պետք է ըլլա Մատենադարանը Հակոբ Մանանդյանի «Տիգրան Բ-ը և Հռոմը» գործին ֆրանսերեն քարգմանությունը, որուն փորձերը ես չեմ տեսած:

Գիրքը քարգմանելու, և գրքին այստեղ գտնվող միակ օրինակը տվողը ես եմ: Նույնպես իմ թելադրությամբ է, որ Կարկաչինոյեն հառաջաբան մը խնդրվեցավ¹¹, որովհետև հռոմեական պատմության մեջ հեղինակություն մըն է:

Կարկաչինո, որ հայերեն չի գիտեր, քարգմանության համար կըսե, քե սքանչելի է, և արդարև սքանչելի է: Սակայն քարգմանությունը մասամբ միայն Հրանտ Թորոսյանինն է¹²: Իր քարգմանությունը հայ մը համեմատեց քնագրին հետ և կարծես շուրջ 100 կամ 150, եթե ոչ ավելի, սխալ մատնանշեց: Այդ սխալ կարծված կետերը հաղորդվեցան Թորոսյանին: Ի վերջո, սրբագրիչին և քարգմանիչին միջև համաձայնություն գոյացավ և ըստ այնմ քարգմանությունը քարեփոխվեցավ: Մեկ կետի վրա պնդեց Թորոսյանը: Մոմսենեն¹³ Մանանդյան հատված մը քարգմանած է, որ կսկսի հետևյալ բառերով. «Կարինետային պատերազմը փոխվեցավ փոքրասիական պատերազմի...»¹⁴: Սրբագրիչը սխալ գտավ Թորոսյանի քարգմանությունը, որ հետևյալն էր «...Քափինեթայի պատերազմը...»: Թորոսյան պնդեց իր քարգմանության ճշտության վրա և ի վերջո ինձի դիմեցին, որ Մոմսենի մեջ փնտռեմ, քե ի՞նչ իմաստ ունին Մանանդյանի քարգմանած բառերը: Բնականաբար Թորոսյանի քարգմանությունը սխալ էր, և ըստ այնմ սրբագրվեցավ... Այս սրբագրություններն ետքը, ֆրանսիացի ռուսոցի մը լիսէի, ֆրանսերենի տեսակետով սրբագրեց քարգմանությունը: Այսպես, ոչ միայն քարգմանության սխալները քննիչի մը կողմն սրբագրվեցան, այլև ֆրանսերեն ռճն ալ սրբագրվեցավ:

Թորոսյանի քարգմանությունը համեմատված է քնագրի հետ և հարկ եղած ուղղումները կատարված են, իսկ ֆրանսերենը քարեփոխված է ֆրանսացիի մը կողմն:

Չերզ Պերպերյան

1 Նկատի ունի «Revue des Etudes Arméniennes» հայագիտական հանդեսը, որը լույս էր տեսնում Սորբոնի համալսարանի նախաձեռնությամբ Փարիզում՝ Ա. Մեյեի և Ֆ. Մակլերի խմբագրությամբ (1920-1930):

2 «Revue»-ի երկրորդ շրջանը՝ Է. Բենվենիստի խմբագրությամբ, հրատարակվում է 1964 թվականից:

3 Այսինքն՝ 1963 թվականի:

4 Տե՛ս Հ. Մանանդյան, Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում (Կշիռները և տարողության ու երկարության չափերը որոշված են և վերածված այժմյան կիրգրամների, լիարերի ու մետրերի): Հրատարակություն Մեյրոնյան ֆոնդի, Երևան, 1930, 141 էջ:

5 Հ. Մանանդյանի սույն աշխատության ֆրանսերեն քարգմանությունը լույս է տեսել հանդեսի 3-րդ և 5-րդ հատրվերում (տես *H. Manandian, Les poids et les mesures dans les plus anciennes sources arméniennes (Les poids et les mesures de capacité et de Longueur sont définis et convertis en kilogrammes, litres et metres actuels)*. - REArm, 1966, t. III, էջ 315-345; 1968, t. V, էջ 369-419:

6 Տե՛ս Հ. Մանանդյան, Տիգրան Բ և Հռոմը: Նոր լուսարանությամբ ըստ սկզբնաղբյուրների: ԱրմՖԱՆի հրատարակչություն, Երևան, 1940, 250 էջ: Տե՛ս նաև ֆրանսերեն քարգմանությունը՝ *H. Manandian, Tigrane II et Rome. Traduit de L'Armenie, oriental par H. Thorossian, Lisbonne, 1963, 224 p.* Ֆրանսերեն քարգմանության հանգամանքների մասին ավելի մանրամասն տե՛ս N 2-րդ նամակն ու ծանոթագրությունները:

7 Տե՛ս *Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. эры - XV в. н. эры)*. Изд. второе, переработанное и дополненное. Изд. Ервосуниверситета, Ереван, 1954, 346 էջ:

8 Տե՛ս *H. A. Manandian, The trade and cities of Armenia in relation to ancient world trade. Translated from the second Revised Edition by Nina G. Garsoian, Lisbon, 1965, 248 էջ:*

9 *Ջերոմ Կարկոպիճն*- ֆրանսիացի պատմաբան, Ֆրանսիայի գիտությունների Ազգային ակադեմիայի անդամ: Նրա գրած առաջարանը տե՛ս «Տիգրան Բ և Հռոմը» գրքի ֆրանսերեն քարգմանության սկզբում (էջ V-X):

10 «Վարդապետ Կյուրպենկյան հիմնադրություն»- բարեգործական հաստատություն (Լիսաբոն, 1956-ից): Ունի հայկական բաժին, որը տարեկան որոշ գումարներ է հատկացնում ի նպաստ հայագիտության զարգացման: Հիմնադրության «Հայկական մատենաշարով» լույս են տեսել արժեքավոր շատ գրքեր, ձեռագրացուցակներ, հին հայկական բնագրեր և այլն, այդ թվում՝ Հ. Հ. Մանանդյանի նշված երկու գրքերը:

11 Տե՛ս ծան. 9:

12 Հրանտ Թորոսյան (1886-1966)- հայագետ, մանկավարժ: Ֆրանսերենով հեղինակել է «Հայ գրականության պատմություն» (Փարիզ, 1951), «Հայաստանի և հայ ժողովրդի պատմություն» (Փարիզ, 1957) և այլ աշխատություններ:

13 Մոմզեն Թեոդոր (1817-1903)- գերմանացի պատմաբան: Հին Հռոմի պատմության մասնագետ, «Հռոմի պատմությունը» հինգհատորյակի հեղինակ, անդրադարձել է նաև հին Հայաստանի պատմության հարցերին:

14 Իրականում այդ հատվածը Հ. Մանանդյանի մոտ այսպես է. «Կարինեսային պատերազմը,- ասում է Մոմզենը,- դառնալու էր այժմ ազգային-ասիական պատերազմ» (տե՛ս Հ. Մանանդյան, Տիգրան Բ և Հռոմը, էջ 143, նաև *Я. А. Манандян, Тигран Второй и Рим. В новом освещении по первоисточникам (Пер. с арм. А. А. Поповяна)*, Ереван, 1943, էջ 143:

Համեմատությունը ցույց է տալիս, որ Հ. Մանանդյանի քարգմանությունը փոքր-ինչ տարբերվում է Մոմզենի բնագրից. «Война должна была теперь стать из войны *Правительств* национально-азиатской войны» տես *Т. Моммзен, Римская история*, т. III, Москва, 1941, էջ 61 (ընդգծումը մերն է՝ Պ. Հ.): Հ. Մանանդյանը օգտագործել է Թ. Մոմզենի աշխատության 1887 թ. հրատարակությունը]:

П. О. ОГАНЕСЯН - Из истории иноязычных переводов трудов Акопа Манандяна. - Исполнилось 125-летие выдающегося историка, первого ректора Ереванского университета Акопа Амазасповича Манандяна. Многие стороны научного наследия Манандяна стали непереходящими ценностями армянской культуры и, в частности, историографии. Его важнейшие монографии в переводах предствлены мировой научной общественности. Важную роль в деле переводов трудов Манандяна сыграл известный французский ученый армянин Айк Перперян. Данная публикация касается истории перевода трудов Манандяна "Тигран и Рим, о городах и торговле древней Армении", "Весы и меры в древних армянских источниках".